ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Միքայել Հրանտի Վարդանյանը, ով հանդիսանում է հայ գործարար, բարերար, «Գրանդ Հոլդինգ» ընկերության հիմնադիր և ղեկավար, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 4-րդ և 5-րդ գումարումների պատգամավոր, ծնվել է 1973 թվականի հունիսի 11-ին Երևանում: 1995 թվականին ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը: Ստացել է ճարտարագետ-մեխանիկի որակավորում: 1992-1995 թվականներին աշխատել է Երևանի «Գրանդ Ակումբ» ԲԲԸ-ում՝ որպես տնտեսագետ, իսկ 2002-2003 թվականներին եղել է «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՀՁ ՍՊԸ գործադիր տնօրեն: Ամուսնացած է, ունի երեք երեխա:

Միքայել Վարդանյանը իր աշխատանքային գործունեության ընթացքում մշտապես Հայաստանի օգնություն է ցուցաբերում հաշմանդամներին, զոհված զինծառայողների ընտանիքներին, վիրավոր զինծառայողներին, կարիքավոր ընտանիքներին: Նաև ֆինանսական աջակցություն է ցուցաբերում մշակույթի, առողջապահության և սպորտի ոլորտներին:

Ի թիվս Հայաստանի Հանրապետությունում կատարած բազմաթիվ բարեգործական տարբեր ծրագրերի՝ վերջինս արժեքավոր ծրագրեր է իրականացրել և իրականացնում Մասիս համայնքում, որոնցից են՝

1. Մասիս քաղաքի Սուրբ Թադևոս եկեղեցու շինարարության ֆինանսավորումը,
2. 2016 թվականին հիմնանորոգվել է Մասիսի համայնքապետարանի դիմացի այգին (80 673 200 դրամ),
3. 2024 թվականին փչացած խաղասարքերը փոխարինվել են նորերով (6 հատ),
4. 2021 թվականին «Վարդանյաններ ընտանիք» հիմնադրամի կողմից իրականացվել է «Հրանտ Վարդանյանի» անվան փողոցի հիմնանորոգումը և լուսավորության ցանցի անցկացումը (3325 մ երկարությամբ և 96 հատ լուսատու հենասյուններով՝ 92 077 0256 դրամ արժողությամբ),
5. 2024 թվականին «Վարդանյաններ ընտանիք» հիմնադրամի կողմից Մասիս համայնքին նվիրաբերվել են պլաստմասե աղբամաններ՝ 230 հատ / 29 399 281 դրամ /, UAZ

բեռնատար մեքենա՝ / 7 400 000 հազար դրամ / , KAMAZ աղբատար մեքենա ՝ / 41 250 000 դրամ / և KAMAZ՝ հատուկ համակցված մեքենա / 38 300 000 դրամ / արժողությամբ:

Միքայել Վարդանյանը իր հայրենանվեր գործունեության ընթացքում պարգևատրվել է «Մխիթար Գոշ» (2011 թ.) մեդալով և «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» (2015 թ.) շքանշանով:

Հաշվի առնելով Միքայել Վարդանյանի ունեցած մեծ ավանդն ու բացառիկ դերը՝ ի բարօրություն և ի շահ Մասիս համայնքի զարգացման և բարգավաճման, առաջարկում եմ Միքայել Հրանտի Վարդանյանին շնորհել «Մասիս համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում: